

# «ԵՐԵՎԱՆԻ Վ.ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.80 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»



ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԾՈՎԻՆԱՐ ԿԱՍՈՑԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ



ԵՐԵՎԱՆ 2023



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը

Հաստատության անվանում՝ Վ. Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոց

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծովակալ Բասկովի 2/1

Հարկայնություն 4

Շենքը՝ տիպային

Մասնաշենքերի քանակ 2

Տարածքի մակերես 9000մ<sup>2</sup>

Շենքի մակերես 3452 մ<sup>2</sup>

Կառուցման տարեթիվ 1953թ.

Վերակառուցման տարեթիվ 2008թ.

Ելքերի քանակ. հիմնական՝ 3, պահեստային՝ 3

Հերթայնություն 1

Նախագծային հզորություն (աշակերտ) 730

Սովորողների թիվ 551

Աշխատակիցների ընդհանուր թիվ 58

Տնօրեն՝ Ծովինար Մելքումյան հեռ. 077781000

Ուսուցչանոց հեռ. 010581601

Կազմակերպ-իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ ոչ առևտրային

ՀՎՀՀ՝ 01814111

Հ/Հ՝ S9F900018005034

Պաշտոնական կայք՝ <https://yerevan80.schoolsite.am/6https://reports.emis.am/#/schools-manual-reports/schools/114>

Սոցիալական հարթակ՝ <https://www.facebook.com/vagharsh.vagharshyan>

Էլեկտրոնային հասցեներ՝ [school80@schools.am](mailto:school80@schools.am), [vagharshyan80@mail.ru](mailto:vagharshyan80@mail.ru)

Ներքին գնահատում՝ <https://lib.amedu.am/article/1867>

Պաշարների շտեմարան՝ <https://lib.amedu.am/>

Վերոնշյալ Էլեկտրոնային հղումները առկա տեղեկատվության հավաստիությունը ճշտելու համար են:

Չարգագման ծրագրում օգտագործված հապավումները

ԴԶԾ-դպրոցի զարգացման ծրագիր

ՀՊԶ-Հանրակրթության պետական չափորոշիչ

ՆԴԿ-Ներդպրոցական վերահսկողություն

ԿՉԼԱԿ-Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն

ՀՄԿ-Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՏՄԱԿ-Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն

ԲՄԹ-բազմամասնագիտական թիմ-հոգեբան, լոգոպեդ, ուսուցչի օգնական, բուժքույր

ԿԱՊԿՈՒ-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ՏԻՄ-Տարածքային ինքնակառավարման մարմին

ՏՈՒԱԳՏ-Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ

ԿՏԱԿ-Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

ԳԹԿ-Գնահատման և թեստավորման կենտրոն

ԿԽ-Կառավարման խորհուրդ

Մ/Մ- Մեթոդական միավորում

ԱԽ-Աշակերտական խորհուրդ, ԾԽ-Ծնողական խորհուրդ, ՄԽ- Մանկավարժական խորհուրդ



# Ներքին նախարարի աշխատակազմի

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցումներն ու պահանջները հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

## Ծրագրի գերակա նպատակը

Դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը համապատասխան, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով ձևավորված կարողությունների ձևավորմանը, կպահովեն սովորողների կրթական կարիքների բավարարումը՝ ուսուցումը կազմակերպելով սովորողների նախասիրությունների համապատասխան՝ ղեկավարվելով հանրակրթական պետական չափորոշիչներով: ԵՎ ի վերջո կձևավորվի կարողունակ քաղաքացի, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

### ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

1. Հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները
2. Ձևավորել զարգացումն ապահովող կրթական միջավայր
3. Արդյունավետ օգտագործել առկա ռեսուրսները՝ արդիականացնելով նյութատեխնիկական բազան
4. Զարգացնել սովորողների կարողությունը
5. Բարելավել ներդպրոցական հսկողությունը
6. Նպաստել ուսուցիչներին որակավորման բարձրացմանը:

## ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի սույն զարգացման ծրագրով նախատեսված հնգամյակի վերջում պետք է ակնկալվի՝

- Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայրի ձևավորումը
- Բարեկարգված, ապահով կրթական միջավայրի ապահովումը
- Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, ուսուցիչ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունների ամրապնդում:

- Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն

- Փորձառու և ճանաչված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ
- Դպրոցի և ուսուցչի հեղինակության բարձրացում, բարձր վարկանիշի ապահովում:



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

- Դասավանդող կադրերի կարողությունների հզորացում:
- Վերապատրաստող ուսուցիչների առկայություն:
- Համընդհանուր ներառական կրթության ծրագրի իրականացում
- Տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից միջոցների կիրառման կիրառության ընդլայնում
- Դպրոցի ուսումնականության բազայի բարելավում:
- Աշակերտների կրթության որակի էական բարելավում:
- Դպրոցի ակտիվ գործող շրջանավարտների խորհրդի անդամների ընդլայնում և ամրապնդում:
- Աշակերտության 95% և ավելի ընդգրկվածությունն արտադասարանական խմբակներում:
- Օտար լեզուների խորացված ուսուցում
- 21-րդ դարի գիտակից, կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորում
- Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցող աշակերտների թվի ավելացում:
- Նյութատեխնիկական ժամանակակից բազայի հագեցվածություն:
- Լիցենզավորման պարտադիր պահանջներին ու պայմաններին բավարարող լաբորատորիաների, արհեստանոցների ապահովում, ինչպես նաև մարզադահլիճի սարքավորումների, նյութերի, անհրաժեշտ գույքի և գրադարանային-տեղեկատվական համակարգի բարձր հագեցվածություն:
- Դպրոցում բարոյահոգեբանական առողջ, ստեղծագործ, համագործակցող մթնոլորտի ձևավորում

## ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔԸ

***21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) քաղաքացու ձևավորումն է. զինված գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրենասեր:***



ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն-----5

1. Հաստատության Գործունեությունը -----11

ա) շենքային պայմանները

բ) դպրոցի առաքելությունը և զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և նյութատեխնիկական պարագաները

գ) ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

դ) դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

ե) դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

զ) կառավարման և խորհրդակցական մարմինները

է) համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

ը) ուսումնական միջավայրը

թ) կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

ժ) դպրոցի կողմից իրականացվող տեխնոլոգիաները եվ նորարարությունները

ի) առկա են հետևյալ հիմնախնդիրները

2. Դպրոցի իրավիճակի վերլուծությունը: Ուժեղ և թույլ կողմերը-----35

3. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները-----52

4. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

5. Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները և միջոցառումների ժամանակացույցը

6. Պատասխանատուները/Կատարողները

7. Արդյունքների գնահատման չափանիշները

8. Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

9. Վերահսկողության մեխանիզմները

10. Ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողությունը-----73

11. Եզրափակում-----89

12. Կցված փաստաթղթեր և լուսանկրաներ-----90



# Ներքին նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատու: Ընդհանրացնելով. Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Չէ՞ որ կրթությունն է անհատի բարեկեցության ապահովման, երկրի տնտեսական աճի, սոցիալական առաջընթացի և պետության ամրապնդման գրավական ու շարժիչ ուժ:

Հիմք ընդունելով կրթության համակարգի՝ արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածը՝ Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը:

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի գերխնդիրն է հանդիսանում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և աշակերտների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը՝ պահպանելով համընդհանուր ներառման հիմնական գաղափարներն ու սկզբունքները:

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի զարգացման սույն ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.

1. Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
2. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»
3. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր» նախագիծը
4. «Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագիրը»
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համապատասխան փոփոխությունների (2009թ, 2018թ, 2022թ),
6. ՀՀ կրթության մասին օրենքը,
7. ՀՀ Սահմանադրությունը,
8. «Երևան քաղաքի հանրակրթության զարգացման հայեցակարգ» նորմատիվ փաստաթղթի հիմնադրություններին
9. Նախորդ 5 տարիների գործունեությունը



# Ներքին նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

10. Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները

11. Դպրոցում առկա հիմնախնդիրները

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան:

«Ծրագիրը» պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը: ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանում է «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարվում է գործառույթների պլանավորում, որն անհրաժեշտ միջոցառումների ժամկետների և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու, բաշխելու և ծրագրի բյուջեն կազմելու միջոց է:

Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝

ա/ Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում

բ/ Ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում:

գ/ Ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում

դ/ Ծրագրի իրականացումն ապահովող պատասխանատուների, ժամկետների հստակ սահմանում

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի սույն զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ հաջորդական քայլերը և որպես սկիզբ իրականացվել է նախորդ 5 տարիներին կատարած աշխատանքների ամփոփ վերլուծություն, որի արդյունքում.

1. սահմանվել է դպրոցի առաքելությունը,
2. վերլուծվել է իրավիճակը, բացահայտվել են ուժեղ և թույլ կողմերը,
3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
4. գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
5. ներկայացվել է իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները,
6. ներկայացվել են դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման գործողությունները, ժամկետները, սահմանվել են հստակ պատասխանատուները, վերահսկողները,
7. վերլուծվել են անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները
8. սահմանվել են ակնկալվող արդյունքները՝ ժամկետներով
9. տրվել են արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողության մեխանիզմները:



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## 2018-2023 թթ -ի ընթացքում կատարված աշխատանքները

Ոլորտը	Իրականացված աշխատանքը
<p><b>Դպրոցի շենքային պայմաններ</b></p>	<p>Վերանորոգված է դպրոցի հիմնական մասնաշենքը(2), փոխվել են դպրոցի 2 հիմնական հոսանքի վահանակները(շիթ), կոսմետիկ վերանորոգվել է դպրոցի բոլոր դասասենյակները, փոխվել են դպրոցի բոլոր դասասենյակների շերտավարագույրները դպրոցի բոլոր միջանցքները, լամինապատվել են դպրոցի ուսուցչանոցի և տնօրենի կաբինետի ,ընդունարանի հատակները , ամբողջովին վերանորոգվել է դպրոցի տանիքը, բոլոր մուտքերում տեղադրվել են անձրևապաշտպան տանիքներ , վերանորոգվել, բարեկարգվել է դպրոցի մարզադահլիճի հանդերձարանները(4), փոխվել են սանհանգույցների զուգարանակոնքերը (20), մեկ սանհանգույցն ամբողջությամբ վերանորոգվել է և հարմարեցվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին, վերանորոգվել է դպրոցի հանդիսությունների դահլիճը և կահավորվել ժամանակակից տեխնիկայով՝ էլեկտրոնային էկրան, պրոյեկտոր, բազմաֆունկցիոնալ 2 երաժշտական կենտրոն, 2 բարձրախոս, ամբողջությամբ փոխվել է բեմահարթակը ընդարձակվել , վերամոնտաժվել է լուսավորությունը, փոխվել են վարագույրները, բարեկարգվել է բակը և դպրոցի տարածքը, տնկվել են պտղատու ծառեր, անվանակոչված եղևնիներ (3) և գեղեցիկ, դեկորատիվ բույսեր ,վարդեր ,այլ ծաղիկներ,դպրոցի բակում կանգնեցվել է 44-օրյա պատերազմին նվիրված խաչքար, առանձին հանգստի գոտի՝ նախատեսված ծնողների, երեխաների համար:</p> <p>Հիմնված է Մասնագիտական կողմնորոշման ակումբ,որն ամբողջությամբ կահավորված է տարբերվող գեղեցիկ գույքովորը ներառում է գունավոր սեղան-աթոռներ,պահարան,սպիտակ գրատախտակ,պրոյեկտոր,նոթբուք, ավելացվել են առարկայական կաբինետները՝ հայոց լեզվի և գրականության, պատմության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, ռուսերենի, անգլերենի, տեխնոլոգիայի, ՆԶՊ-ի: Դպրոցը 2021թվ.-ին ձեռք է բերել կրակային նախապատրաստության համար հատուկ զենք,որի համար առանձնացվել է հատուկ վերանորոգված, օդափոխության համակարգով և անվտանգության ազդանշանով սենյակ , որտեղ տեղադրված է պահոցը, դպրոցում 2 դասասենյակ անվանակոչվել են 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի սաների անուններով, դպրոցում ստեղծվել է «Պատվո անկյուն»՝ նվիրված մեր հերոս տղաներին,</p>





# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

	<p>հիմնվել է առանձին գրադարանին կից ընթերցասրահ, հարմարեցված դասասենյակ իր առանձին գույքով, որը ներառում է ավագային-լուսային սեղան, պահարաններ, սեղան - աթոռներ, մոտորիկյան զարգացնող բազմատեսակ խաղեր, պարագաներ, նյութեր և հարմարեցված սանհանգույց՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար(1)</p> <p>Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը. դպրոցում 2018 թ-ին ամբողջությամբ մոնտաժվել է տարհանման համակարգը, տեղադրվել են հրշեջ վահանակներ և կրակմարիչներ (11հատ), իսկ 2023 թ-ին Լիագոր մարմնի կողմից համալրվել է ևս 7-ով: Բոլոր դասասենյակները կահավորված են բավականին լավ վիճակում գտնվող, բայց օգտագործված գույքով, որն անհրաժեշտության դեպքում համալրվում է :</p>
<p><b>Նյութատեխնիկական բազա</b></p>	<p>Դպրոցն ունի 25 նոր համակարգիչ, 4 նոութբուք, 1 պլանշետ, 5 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, 1 սկաներ, 5 էլեկտրոնային գրատախտակ, 8 պրոյեկտոր, 1 էլեկտրոնային էկրան, 6 տպիչ սարք Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, որոնք համալրված են ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով, աշխարհագրության, պատմության, վերաբերյալ ուսումնական նյութերով, քարտեզներով, գլոբուսներով, որոնք պարբերաբար համալրվում են</p> <p>Դպրոցի մուտքի մոտ, միջանցքներում, բակում տեղադրված են տեսախցիկներ</p> <p>Գործում է անվտանգության համակարգ</p>

## Դպրոցի առաջընթացը

<p>Անգլերենի ուսուցում 1-ին դասարանից՝ հետագայում խորացված ուսուցում իրականացնելու նպատակով</p>
<p>Ռուսերենի ուսուցում 1-ին դասարանից՝ հետագայում խորացված ուսուցում իրականացնելու նպատակով</p>
<p>Դպրոցում գործում է երգչախումբ</p>
<p>Աշակերտները 2022-2023 ուստարվա ընթացքում մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքների ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացրած, մասնավորապես՝ «Հայ երգը դպրոցում»,»Ես բնագետ եմ «,և այլն</p>
<p>Դպրոցում կա ձևավորված ավանդույթ , որի շրջանակներում բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար ամենամյան մրցույթներ են կազմակերպվում Երևանի այլ հանրակրթական դպրոցների հետ. այս պահին ընթանում են « Պատանի քիմիկոս» մրցույթի նախապատրաստական աշխատանքները</p>
<p>Դպրոցնր 2021թ-ից մասնակցում է համադպրոցական «ԿՈՒԻՉ» կրթական ամենամյա մրցույթին, որտեղ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտն ընդգրկվել է լավագույն տասնյակի մեջ, իսկ 3 աշակերտներ պարգևատրվել են պատվոգրերով</p>
<p>2019թ-ին դպրոցի 9-րդ դասարանցիներ էդերա Մկրտչյանը և Նառա Ղազարյանը պատմության օլիմպիադայում գրանցել են հաջողություններ և արժանացել պատվոգրի:</p>
<p>2022թ-ին դպրոցի աշակերտ Լևոն Ալոյանը մասնակցել է մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադային և</p>



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

<p>գրադեցրել 3-րդ պատվավոր հոիզոնականը</p> <p>Հեռավար կրթության ապահովում՝ ըստ անհրաժեշտության, միասնական կրթական հարթակի՝ MS Teams-ի և այլ հարթակների կիրառությամբ</p> <p>Համընդհանուր ներառական կրթության կազմակերպում, իրականացում, ռեսուրս-կենտրոնի ստեղծում և համապատասխան գործիքների ձեռքբերում</p> <p>Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի պաշտոնական կայքը՝ <a href="https://yerevan80.schoolsite.am/">https://yerevan80.schoolsite.am/</a>, ֆեյսբուքյան էջը՝ <a href="https://www.facebook.com/vagharsh.vagharshyan">https://www.facebook.com/vagharsh.vagharshyan</a>, youtube-յան հասցեն՝ <a href="https://www.youtube.com/channel/UCIE1tMLBIA8eceSk5G1XYjA">https://www.youtube.com/channel/UCIE1tMLBIA8eceSk5G1XYjA</a>,</p>	
<p><b>Մանկավարժական համակարգի ձեռքբերումներ/ կցվում են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները</b></p>	<p>Բոլորն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում</p>
	<p>Բոլոր ուսուցիչներն մասնակցում են հերթական վերապատրաստումներին</p>
	<p>Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ, պատրաստվում են դիմել տասակարգի, կամավոր ատեստավորման</p>
	<p>1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման և հաղթահարել անցողիկ շեմը 69%-ի շեմը</p>
<p><b>Աջակցություն մանկավարժներին/կցվում են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում</li> <li>• Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, ktak.am, armedu.am, lib.armedu.am, larning.armedu.am, eduarmeni.am, kznakhimnadram.blogspot.com, dasaran.am, imdproc.am,</li> <li>• Կրթության զարգացման հիմնադրամի կիրառում</li> <li>• Տարբեր վերապատրաստումների, ծրագրերի մասնակցության միջոցով՝ մասանգիտական հմտությունների կատարելագործումը՝ Cambridge Assessment English, The Regional English Language Office, British Council, Institute Of Teachers Education International languages Campus -Ministry Of Education Malaysia (Educational Leadership And Management-18 Series Webinar)</li> </ul> <p>Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում</p>
<p><b>Ժողովրդավարական սկզբունքների կարևորում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակարգի հետ:</li> <li>• ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, անցկացնում ինքնուրույն միջոցառումներ, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, անկաշկանդ ներկայացնում և քննարկում է իր պլանները տնօրենի հետ:</li> <li>• ԱԽ-ի իրավական և սոցիալական հանձնախմբերը կազմակերպում են քննարկումներ, միջոցառումներ՝ ուղղված աշակերտների իրավունքների և պարտականությունների ճանաչմանը:</li> </ul>



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

<p><b>Դպրոցի համագործակցային դաշտ</b></p> <p><i>և</i></p> <p><b>Դպրոցի ակտիվություն/ կցվում են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները</b></p>	<p>2019 թ. Դպրոցը համագործակցել է «SAVE THE CHILDREN» միջազգային կազմակերպության հետ, որի արդյունքում ունեցանք հատուկ մասնագիտական կողմնորոշման ակումբ Դպրոցը համագործակցել և համագործակցում է՝ տարբեր բուհերի և միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ /ճանաչողական այցեր, սահիկահանդեսներ/</p> <p>Մասնագիտական կողմնորոշման ռեսուրս- կենտրոնի հետ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի Համայնքը (ակտիվորեն մասնակցում է Կենտրոն վաչակական շրջանի կողմից կազմակերպված միջոցառումներին, կազմակերպում է ավանդական միջոցառումներ, տոներ, ծեսեր՝ ներգրավելով համայնքի բնակչությանը)</p> <p>Կենտրոնի թիվ 22 գրադարանի Հանրապետական, միջազգային մրցույթների ու մրցաշարերի՝ «Կենգուրու», «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեդու» հանրապետական մրցույթներ, ամենամյա ասմունքի փառատոն, ստեղծագործական մրցույթներ, տարբեր գրադարաններում և սպորտ դպրոցներում կազմակերպվող մրցույթներ</p> <p>Մշակութային և սոցիալական բնույթի արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ՝ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, գրույց-քննար-կումներ, բանավեճեր Հիշատակի և խոնարհման երթեր՝ Ծիծեռնակաբերդ, Հաղթանակ զբոսայգի, Եռաբլուր, Ազգալոյանի կիսանդրու մոտ այց՝ հերոսի ծննդյան օրը</p>
<p><b>Դպրոցում ձևավորված ավանդույթներ</b></p>	<p>Ամենամյա տարեվերջյան եռակողմ նիստ՝ դպրոց-ծնող-աշակերտ, որի ժամանակ տնօրենը տալիս է տվյալ ուստարվա հաշվետվությունը՝ շրջայց կազմակերպում դպրոցում, տվյալ ուսումնական տարվա առավել ակտիվ ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները խրախուսվում են դպրոցի տնօրենի</p> <p>շնորհակալագրերով ու պատվոգրերով:</p> <p>«Տարվա աշակերտ» մրցանակաբաշխություն</p> <p>«Տարվա ուսուցիչ» մրցանակաբաշխություն</p> <p>Ամանորյա բարեգործական տոնավաճառ դպրոցը բարեկարգելու համար</p> <p>Գրքի տոն և մայրենիի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, Բանակի օր, Լ Ազգալոյանի, Վ Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառումներ, Մայրության և Գեղեցկության տոն, ուսուցչի տոն, Մուրբ Զատիկ, Տյառնընդառաջն այլն</p>



# Ներքին նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## 1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### Ա)Շենքային պայմանները

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1953 թվականին:

Դպրոցը 1964թ-ին անվանակոչվել է հայ դերասան, ռեժիսոր, դրամատուրգ, թատերական գործիչ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանի անվամբ:

Վաղարշ Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոցը գտնվում է Կիլիկիա թաղամասում՝ Ծովակալ Իսակովի պողոտայի վրա: Հաշվի առնելով թաղամասի բնակիչների նախասիրությունները՝ դպրոցը եղել է արտադրական ուսուցմամբ: Դպրոցը միահերթ է, հնգօրյա: Ուսուցանվող օտար լեզուներն են անգլերենը և ռուսերենը: Գործում են նկարչության, տիկնիկագործության, ինֆորմատիկայի, պարի, երգի, սպորտային, մասնագիտական կողմնորոշման, թատրոնի անվճար խմբակներ: Առկա է երկարօրյա խումբ: Դպրոցում կա 15 ստանդարտ դասասենյակ, 11 առարկայական դասասենյակ (Հայոց լեզու և գրականություն, Պատմություն, Աշխարհագրություն, Կենսաբանություն, Քիմիա, Ֆիզիկա, Անգլերեն, Ռուսաց լեզու, Ինֆորմատիկա, Շախմատ և Ռազմագիտություն) 2 լաբորատորիա, 2 արհեստագործական սենյակ, հարմարեցված ռեսուրս կաբինետ, 2 մարզադահլիճ՝ բավարար մարզագույքով, 1 հանդիսությունների դահլիճ, 1 գրադարան/ընթերցասրահ, 1 մասնագիտական կողմնորոշման ակումբ, 1 ճաշարան, 1 համակարգչային դասասենյակ, բուժսենյակ, մեկուսարան, հաշվապահի սենյակ, 12՝ այդ թվում հարմարեցված 1 սանհանգույց: Բակը բարեկարգ է, կանաչապատ: Բակի խնամքին մասնակցում են նաև աշակերտները:

Դպրոցը հաստատվել է որպես հիմնական ՀՀ կառավարության 2010 թ-ի մայիսի 6-ի N 575-Ն որոշմամբ:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2020 թվականին: Դպրոցական շենքը հիմնանորոգվել է 2006-2008 թ-ին «Լինսի» հիմնադրամի «Դպրոցաշինություն» ծրագրով:

Դպրոցական շենքը տիպային է, այն նախատեսված է 730 աշակերտների համար: Դպրոցն ունի երկու մասնաշենք, 4 հարկանի է:

Համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ 19.06.2013 թ. սերիա Ա N 1041 հրամանով և 18.03.2021թ սերիա Ա N1184 տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական ընդհանուր՝ 350 սահմանային տեղով,
- Հիմնական ընդհանուր՝ 430 սահմանային տեղով:

Դպրոցն ունի 1 գրադարան, գրադարանային ֆոնդը կազմում է 8003 գիրք, ընթերց ողների քանակը՝ 550:



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Շինությունների և հարմարությունների անվանումը	Մակերեսը (քմ)	Ծավալը(խմ)
Շենք(եր)	2/3452	12267
Առանձնասենյակներ	3/123	424
Դասարաններ	15/1032	3610
Առարկայական լսարաններ	5/108	351
Լաբորատորիաներ	2/118	412
Արհեստանոցներ	2/95,6	287
Մարզադահլիճներ	2/298	16103
Գրադարան(ներ)	1/70,1	210,3
Բուժկետ	1/21	52,5
Ճաշարան	1/92	276
Հանդերձարան(ներ)	4/37,2	134
Զուգարան(ներ)	20/105	586
Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	3/76	221
Մարզահրապարակ(ներ)	1/990	
Հանրակացարաններ		
Ննջասենյակներ		
Համակարգիչներ	26	
Համակարգչային այլ տեխնիկա	6	
Հեռախոսներ	1	
Զեռուցվող տարածքներ		

Հ/Հ	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (քմ)
	Զեռուցման տեսակը	գազ	3452
	Զեռուցման օրերը	90	3452
	Տրանսպորտային միջոցներ		
	Լոգապատ սովորողներ		
	Երթևեկող սովորողներ		
	Գիշերող սովորողներ		
	Մրգատու այգիներ	Թուզ,նուռ,բալ,ծիրան	
	Դեկորատիվ բուսական այլ այգիներ	Ծաղիկներ ,եղևնիներ,տույաներ և այլ դեկորատիվ ծառեր	
	Շենքերի մաքրվող տարածքներ		3452
	Բակի մաքրվող մակերեսներ		
	Սան. հանգույցների մաքրվող մակերեսներ	20	105
	հողամասի մակերես		8162,7



# Ներքի նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԼԻՑԵՆԶԻԱ

**ՏԱՐՐԱԿԱՆ** հանրակրթական  
(ծրագրի անվանումը)

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

**ՍԵՐԻԱ Ա** № 1041

Սույնով վավերացվում է, որ  
<<Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ  
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ք. Երևան, Իսակովի 2/1  
(գտնվելու վայրը)

ք. Երևան, Իսակովի 2/1  
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Տարրական** հանրակրթական  
(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**



**Ա. Աշոտյան**  
(անունը, ազգանունը)

19 « *նունիսի* » 2013 թ.

**Անժամկետ**  
(լիցենզիայի գործողության ժամկետը)



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**ԼԻՑԵՆԶԻԱ**

№ 415

ՍՈՒՅՆՈՎ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ Է, ՈՐ

«*Էդրեանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 միգրանտացի դպրոց*»  
*պետական ոչ առեւտրային կազմակերպություն*

*Ք. Էդրեան, Մասկոթի 2/1*

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵՈՒ

*հիմնական ընդհանուր կրթության*

ՈՒՐՐ(ՆԵՐ)ՈՒՄ, ՍՈՒՅՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀՎԱԵԼՎԾՈՒՄ ՆԵՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՎ  
ՆՈՐՄԱՑՈՒՅՑԵՐԻՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՈՒՍԿՆԴԻՐՆԵՐԻ)  
ՍԱՀԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՀԱՄԱԴԱՏԱՍՈՒՄ



Վ. Էդրեան

« 15 » մայրի 2006 թ.



# Ներքի նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## **Բ) Դպրոցի առաքելությունը և զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և նյութատեխնիկական պարագաները**

### **Դպրոցի առաքելությամբ պայմանավորված կրթական կարիքների նկարագրությունը**

«Առաքելությունն» այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ:

Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոցի առաքելությունն է յուրաքանչյուր սովորողի ունակությունների զարգացման, պահանջվող կոմպետենցիաների և սովորել սովորելու հմտությունների, կարողությունների ձեռքբերման և արժեքային համակարգի ձևավորման համար անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովումը, բազմակողմանի զարգացած, նախաձեռնող, վերլուծող, ազգային և համամարդկային արժեքներ կրող անահատի, ապագա քաղաքացու ձևավորումը:

ԴԶԾ կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ ինչ է ծրագիրը և պլանավորումը.

Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը կատարելագործվում՝ մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է.

1. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ,
2. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:
3. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:
4. Երաշխավորել սովորողների հավասար կրթության իրավունքը՝ ապահովելով ներառականությունը և մասնակցային ու բազմակարծիք միջավայրը:
5. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոց: Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:
6. Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:
7. Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն:
8. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ:
9. Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները:
10. Կազմակերպել սովորողների խորացված ուսուցումը սովորողի նախասիրություններին և կարողություններին համապատասխան՝ շեշտը դնելով մասնագիտական կողմնորոշման կարևորության վրա:






# Ներքի նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ





# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## ○ **Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը**

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- համակողմանիորեն զարգացած
- մասնագիտորեն կողմնորոշված
- ազգային արժեքներ կրող
- հայրենասեր
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ
- մարդասիրության ոգով դաստիարակված, կոմպետենտ
- համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր

### **քաղաքացիների ձևավորում**

Այսպիսով, դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

## **գ) Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար**

1. Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար
2. Սովորողի կրթական կարիքի գնահատում
3. Սովորողի կրթական կարիքի բավարարում՝ տարբերակված ուսուցմամբ
4. Օտար լեզուների խորացված ուսուցում
5. Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ
6. Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները
7. Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկայից
8. Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ
9. Աշակերտների մտավոր և ֆիզիկական զարգացման բավարար պայմաններ
10. Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:



# Ներքի նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## Մարդկային ռեսուրսներ

Առկա մասնագետների մասնագիտական որակներին համապատասխանություն  
Մանկավարժական համակազմի նոր, փորձառու կադրեր, վերապատրաստված և  
արդի մտածելակերպ և ճկուն գործելաոճ ունեցող մանկավարժներ

Հմուտ ԲՄԹ և վարչական կազմ

Հոգատար, հետևողական ուսումնաստանողակ աշխատակազմ

Համակողմանի զարգացած, նորարարություններով հետաքրքրված աշակերտներ


Աշակերտական համակազմի պարբերաբար նկատվող տեսանելի աճ

Ծնողական համայնքի ներգրավածություն

○ *Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ Ծրագրի իրականացման համար*

## Աշակերտական համակազմ

2022-2023 ուսումնական տարում դպրոցը համալրվել է 20 դասարանով՝ տարեակգրին՝ 561 իսկ այժմ՝ 551 աշակերտով:



Կրտսեր դպրոցում՝ I-IV դասարաններում (8 դասարան) սովորում են 235 աշակերտ, միջին դպրոցում՝ V-IX դասարաններում (12 դասարան)՝ 316 աշակերտ):

## Ֆինանսական ռեսուրսներ

Բարեգործական տոնավաճառներ, ցուցահանդեսներ,  
տարածքների վարձակալություն, դրամաշնորհային ծրագրեր



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Նյութատեխնիկական բազա և  
ենթակառուցվածքներ

- Ռեսուրս -սենյակ, համակարգչային տեխնիկա
- Ժամանակակից սարքեր և սարքավորումներ
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ
- Լաբորատոր սարքավորումներ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան
- Առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ
- Յանդիսությունների դահլիճ
- Սպորտային դահլիճ, մարզահրապարակ
- Ընդարձակ ճաշարան
- Բուժկետ և մեկուսարան

## Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Փորձառու մանկավարժական համակազմը
- Մասնակցային և համագործակցային աշխատանքը
- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը
- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումները՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ
- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ, ինտելեկտուալ խաղեր և այլն)
- Դպրոցում ձևավորված ավանդույթները պահպանելը
- Խրախուսման միջոցները. («Տարվա աշակերտ», «Տարվա շրջանավարտ» անվանակարգերը, շնորհակալագրեր՝ դպրոցասիրության և դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր դպրոցի միջոցառումների ակտիվ մասնակցության, տարրական օղակում՝ «լավագույն ընթերցող», «լավագույն ձեռագիր», «լավագույն ասմունքող» և այլն)
- Խրախուսման միջոցները. («Լավագույն ուսուցիչ», «Լավագույն մեթոդ միավորում», «Լավագույն միջոցառում», «Լավագույն բաց դաս» և այլն)
- Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին, օլիմպիադաներին, նախագծերին:



# Ներքի նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

**Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները**  
Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են՝

## Դրական

1. առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավումը:
2. մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը
3. Արդյունավետ ղեկավարում

## Բացասական

1. կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը,
2. առաքելության նկատմամբ թերահավատությունը,
3. վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը,
4. միանձնյա, անարդյունավետ ղեկավարումը
5. ծնողների ներգրավածության պակասը,
6. կրթական քաղաքականությանը խանգարող տարբեր ֆորս-մաժորային իրավիճակները



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

**Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները**  
Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են՝

## Դրական

1. պետության կրթական բաղաբաղանդության կրթության որակի բարձրացմանը միտված նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը
2. երկրի տնտեսական աճով պայմանավորված կրթության գծով պետական ֆինանսավորման չափաբանակի ավելացումը
3. Համայնքի կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը
4. լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը
5. միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը

## Բացասական

1. դրական գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը
2. համաճարակներով պայմանավորված սահմանափակումները
3. հասարակության մեջ դպրոցի նկատմամբ ձևավորված կարծրատիպերը
4. շահագրգիռ կողմերի անտարբեր վերաբերմունքը



## դ) Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետբյուջեից՝ ըստ իրականացնող հանրակրթական ծրագրի՝ կախված սովորողների թվից:


ՀՀ Կառավարության որոշումով և ԿԳՄՄՆ նախարարի հրամանով դպրոցներն 2023թ-ի սեպտեմբերից ֆինանսավորվելու են ըստ դասարանների թվի, ինչը, մեծ հաշվով, կբալանսավորի ֆինանսական վիճակն և դպրոցը կկարողանա իրականացնել իր գործառնություններն ի նպաստ աշակերտի, մանկավարժի և ամբողջ կոլեկտիվի՝ ունենալով մեկ կարևոր նպատակ:

### Բարձրացնել կրթության որակն՝ հասանելի և հավասար դարձնելով բոլորին:

Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում: Դպրոցի տվյալ ուստարվա բյուջեի նախագիծը, ըստ դպրոցի կանոնադրության պահանջի, պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները, տրվում է կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը:

Յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը, եռամսյա հաշվետվությունները առանց որևէ վարչական խախտումների հաստատվելուց հետո դրվել է դպրոցի պաշտոնական կայքում <https://yerevan80.schoolsite.am/>: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է հստակ և թափանցիկ. 2018թ-ից մինչև 2023թ աշակերտների աճով պայմանավորված (503ից-560) բարելավվել է դպրոցի ֆինանսական վիճակը՝ 81310,5 հազար դրամից հասնելով 110278 հազար դրամի: 2023թ-ին պետբյուջեից ֆինանսավորումը կազմել է 95326,8 հազար դրամ, որը նախատեսվել է 8 ամսվա համար:

Դպրոցը նոր ֆինանսական տարին միշտ ազդարարել է առանց պարտքերի: Ստորև ներկայացնում են ֆինանսական աճողականության գրաֆիկը, նախահաշիվները և պայմանագրերը:



**Ծրագրի վերջում ներկայացված են ֆինանսական փաստաթղթերը:**



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

## Նյութատեխնիկական բազայի /հիմնական միջոցների ձեռք բերման ցուցակը:

2018/հազար դրամ		2019/հազար դրամ		2020/հազար դրամ		2021/հազար դրամ		2022/հազար դրամ	
բյուջե	անհատույց	բյուջե	անհատույց	բյուջե	անհատույց	բյուջե	անհատույց	բյուջե	անհատույց
3521,4	0	2831,4	1288,0	2026,5	0,0	85,0	34,0	3185,0	0

### ե) Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝


«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Սահմանված դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի: ԿՏԱԿ -ի շնորհիվ ապահովվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու շարունակականությունը, հանրակրթական դպրոցների միջև համընդհանուր համակարգչային ցանցը, համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծումը նպաստելով ուսուցիչների համակարգչային գրագիտության բարձրացմանը:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, հետևողականորեն վերլուծություններ կատարելու և հանրակրթության բոլոր պահանջներն կատարելու համար:

### զ) Կառավարման և խորհրդակցական մարմիններ







# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Հաստատության կառավարումն իրականացվում է՝ համաձայն կանոնադրության

Դպրոցի տնօրենը ընթացիկ կառավարումն իրականացրել է պլանավորված ծրագրին համապատասխան և ղեկավարում է ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական աշխատանքները օրենսդրության, կանոնադրության և այլ իրավական ակտերին համաձայն:

Դպրոցի լիազոր մարմինը Երևանի քաղաքապետարանն է, որն իրականացնում է ընդհանուր կառավարումը, վերահսկողությունը և ապահովում բնականոն զարժուներությունը: Այն սահմանված կարգով հաստատել է կանոնադրությունը և փոփոխությունները:

- Կառավարման խորհուրդ, որը կազմված է 9 անձից՝ բարձրագույն կրթությամբ:

Երևանի քաղաքապետի  
2021թ. հուլիսի 22-ի  
N 2603-Ա որոշման

## Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոցի կուլեգիալ կառավարման մարմինների՝ խորհրդի կազմը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ	Օնոդական խորհրդի ներկայացուցիչ	Երևանի քաղաքապետի ներկայացուցիչ		ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցիչ	
				Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը
1	2	3	4	5	6	7	8
	«Երևանի Վ. Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Հովհաննիսյան Սոֆյա Սամվելի 055 40 60 46 sofa_c@mail.ru	Էլչանյան Աննա Գևորգի 033677888 amnna@rambler.ru	Օրբելյան Գևորգ Գագիկի 01151 42 30 09124 20 20 tourism@yerevan.am gevorg.orbelyan@erevan.am	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի պետ	Նազարյան Նելլի Յովսեփի 091 40 67 17 n.nazaryan72@gmail.com	ԿԳՄՍՆ անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ
		Բարսեղյան Արմինե Պարզևի 096 73 33 23 barseghyan_19@bk.ru	Վահանյան Նելլի Աշոտի 094 54 44 18 nellivahanyan86@icloud.com	Գևորգյան Անահիտ Սեյրանի 043 05 00 04 gevorgyan.anahit@yerevan.am	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ		
				Նիկողոսյան Արքմենիկ Հրայրի 094 81 28 05 arqmenik@gmail.com	Գրականագետ		
				Ղազարյան Սոնա Բայկի 099252 515 business.sona@gmail.com	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ		



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Մշտապես գործում է ԿԽ-տնօրեն արդյունավետ համագործակցությունը՝ ի շահ դպրոցի: 2018-2023թթ ԿԽ իրականացրել է կանոնադրությամբ իրեն վերապահված բոլոր գործառնությունները, ինչը հավաստում է դպրոցի պաշտոնական կայքէջում տեղադրված արձանագրությունները, թվենք մի քանիսը.

1. Իրականացրել է վերահսկողություն տնօրենի գործունեության, զարգացման ծրագրի կատարման նկատմամբ
2. Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, աշխատողների և սովորողների կանոնները, ԲՄԹ կազմը, ԿԱՊԿՈՒ աշակերտների ցուցակը
3. Քննարկել և հավանություն է տվել հաստիքացուցակը և տարիֆիկացիան, ծախսերի ամենամյա նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը
4. Քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքերը.

## ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

1. Խորհրդի քննարկմանն է ներկայացրել դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը
2. Կազմել է տարիֆիկացիան, հաստիքացուցակը, նախահաշիվը՝ խորհրդի հավանությամբ ներկայացնելով լիազորված մարմին
3. Աջակցել է դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինների աշխատանքներին
4. ՄԽ ներկայացմամբ հաստատել ուսալանը ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, տեղակալների, դաստեկների ՄՍ նախագահների և մանկավարժների հաշվետվությունները
5. Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել է խորհրդի նիստերին
6. Մահմանված կարգով մշակել և խորհրդի հավանությանն է ներկայացրել ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները
7. Իրականացրել է ներադրական վերահսկողություն, ապահովել է արտադասարանական խմբակների գործունեությունը և կրել պատասխանատվություն որակի և բովանդակության համար
8. Ապահովել է դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը
9. Ապահովել, իրականացրել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված բոլոր գործառնությունները

Դպրոցը սերտորեն համագործակցում է ն՛ կառավարման, ն՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց  
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մանկավարժական խորհուրդ, որը կազմված է 42 մանկավարժական աշխատողներից:

Մանկավարժական խորհուրդը սահմանված կարգով քննարկել է՝

- 1) հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան.
- 2) սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում.
- 3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.
- 4) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը.
- 5) դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական ծառայությունների մատուցման հարցը
- 6) Հաստատել է դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

- 1) տնօրենի նախաձեռնությամբ.
- 2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.
- 3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի (օրինակ անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու հարցը) քննարկման ժամանակ):

Ծնողական խորհուրդ կազմված է 20 անձից

1. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվել են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար
2. ԾԽ կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: ԾԽ նախագահն ընտրվել է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է: Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցել են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը
3. ԾԽ մասնակցել է Ներքին կարգապահական կանոնների մշակմանը, արել կարևոր առաջարկություններ
4. Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ ԾԽ իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության թեկնածուներին:



# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

**«Երևանի Վ. Վաղարշյանի անվ. հ. 80 հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ի  
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ  
«2022-2023» ուստարի**

Դաս.	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան տարեթիվ	Կրթությունը	Աշխատանքի վայրը	Պաշտոնը	Հեռախոս
I <sup>ա+</sup>	Կարապետյան Սուսաննա Արկադիի	1995	Միջնակարգ	Չի աշխատում	-	098-14-96-21
I <sup>բ+</sup>	Պողոսյան Արշալույս Ավետիսի	1990	Միջին մասն.	Չի աշխատում	-	077-71-93-74
II <sup>ա+</sup>	Աղեկյան հռիփսիմե Մանվելի	1993	Միջնակարգ	-	Մասնահար-դար	099-85-88-78
II <sup>բ+</sup>	Աբովյան Վարդուհի Գագիկի	1990	Բարձրագույն	Չի աշխատում	-	055-03-80-48
III <sup>ա+</sup>	Մարգարյան Նարինե Արմենակի	1981	Բարձր.	Չի աշխատում	-	055-77-21-37
III <sup>բ+</sup>	Հակոբյան Թեհմինա Ատոմի	1990	Միջնակարգ	Չի աշխատում	-	07713-30-82-
IV <sup>ա+</sup>	Բեգլարյան Վիկտորյա Գեղամի	1987	Բարձր.	«Ucom» ընկերություն	Ավագ մասնագետ	044-70-70-73 098-70-70-73
IV <sup>բ+</sup>	Սաֆարյան Նադեժդա Գևորգի	1988	Բարձր.	Չի աշխատում	-	077-98-58-44
V <sup>ա+</sup>	Աբրահամյան Անի Վաչիկի	1988	Բարձր.	Չի աշխատում	-	055-50-14-52
V <sup>բ+</sup>	Պողոսյան Արշալույս Ավետիսի	1990	Միջին մասն.	Չի աշխատում	-	077-71-93-74
VI <sup>ա+</sup>	Մուրադյան Կարինե Մարտինի	1977	Միջն.	Չի աշխատում	-	077-54-58-77
VI <sup>բ+</sup>	Սարգսյան Ռուզաննա Արթուրի	1989	Միջին մասն.	Չի աշխատում	-	098-66-88-96
VI <sup>գ</sup>	Վահանյան Նելլի Աշոտի	1986	Բարձր.	Հ. 13 հատուկ դպրոց	Մանկավարժ	094-54-44-18
VII <sup>ա+</sup>	Էլչակյան Աննա Գևորգի	1981	Բարձր.	Չի աշխատում	-	033-67-78-88
VII <sup>բ+</sup>	Մակարյան Սիրանուշ Մոսի	1982	Միջն.	Չի աշխատում	-	077-56-18-95
VIII <sup>ա</sup>	Մկրտչյան Աշխեն Սամվելի	1983	Միջն.	Չի աշխատում	-	098-30-60-58
VIII <sup>բ</sup>	Կարապետյան Մարինե Գաբրիելի	1986	Միջն.	Չի աշխատում	-	093-40-80-57
VIII <sup>գ</sup>	Գևորգյան Էլինա Ռաֆիկի	1984	Բարձր.	Չի աշխատում	-	093-56-11-00
IX <sup>ա+</sup>	Հակոբյան Քրիստինե Ռուբիկի	1985	Բարձր.	«Angel's Face» ՍՊԸ	Խորհրդատու	098-86-47-45
IX <sup>բ+</sup>	Այվազյան Մարինե Վաղինակի	1989	Բարձր.	«Աստղիկ» ԲԿ	Բուժքույր	098-01-30-09

Աշակերտական խորհուրդ, որը կազմված է 20 անձից  
Աշխորհուրդը գործում է ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան, օժտված է ինքնակառավարման և ինքնավարության լիազորություններով, մշտապես մասնակցում է դպրոցի կյանքին, հեղինակում միջոցառումներ և կատարում հանրօգուտ աշխատանքներ: Կցվում են աշխորհրդի իրականացրած միջոցառումները և կազմը:




# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց


«Երևանի Վ. Վաղարշյանի անվ. հ. 80 հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական խորհրդի կազմ  
2022-2023 ուստարի

N	Անուն, ազգանուն	Դասարան
1.	Մակինյան Էլեն Աբրահամյան Ռոմիկ	6 <sup>ա</sup>
2.	Մարկոսյան Էրիկ	6 <sup>բ</sup>
3.	Մարուքյան Նիրկոլ Ասատրյան Արարատ	6 <sup>գ</sup>
4.	Ենգիբարյան Միլենա	7 <sup>ա</sup>
5.	Եղիազարյան Լիզա Հովասափյան Լուսինե	7 <sup>բ</sup>
6.	Սարգսյան Սարգիբր Եղիկյան Գոռ	8 <sup>ա</sup>
7.	Ղազարյան Աննա Ղազարյան Ազնիվ	8 <sup>բ</sup>
8.	Պետրոսյան Օվսաննա Ենոքյան Գոռ	8 <sup>գ</sup>
9.	Դոխոյան Գաբրիելլա Փոլադյան Էրիկ	9 <sup>ա</sup>
10.	<b>Հայրապետյան Ալլա (Ա/Խ նախագահ)</b> Բալինյան Խաժակ	9 <sup>բ</sup>

## Դպրոցն ունի 6 առարկայական մեթոդախմբումներ



## Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը





# Ներքև նման նայելով աշխարհին

Վ. Վաղարշյանի անվան համար 80 հիմնական դպրոց

Դպրոցում աշխատում է 42 ուսուցիչ, այդ թվում 5 ուսուցչի օգնական, որոնցից 41ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը միջին մասնագիտական գինդել, աշխատողների թիվը՝ 56, ուսումնաօժանդակ աշտակիցները 15 են:

Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ կան, բոլորն ընդգրկված են 6 առարկայական մեթոդական մասնախմբերում: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 17ժամ է: Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 12 աշակերտ: Ուսուցիչներից 80%-ը անցել են ատեստավորման համար կազմակերպված վերապատրաստումներ: Դպրոցն անցած ուսումնական տարում ապահովել է 100% առաջադիմություն և 46,1% որակ: Դպրոցի 98 աշակերտներ գերազանցիկներ են, 232-ը՝ հարվածայիններ: Աշակերտության 50%-ը ընդգրկված է արտադասարանական, իսկ 85%-ը՝ արտադպրոցական խմբակներում:

## **Է) Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ**

Դպրոցը գտնվում է ք. Երևան, Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 2/1 հասցեում: Այս տարածքը խիտ բնակեցված է: Համայնքը հիմնականում զբաղված է: Որոշ բնակիչներ գործազուրկ են: Համագործակցությունը համայնքի հետ նպատակ է հետապնդում:

- Ակտիվացնել ծնողխորհրդի գործունեությունը
- Մասնակցել ծնողխորհրդի նիստերին, հանդես գալ առաջարկություններով
- Խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը
- Խթանել, ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը
- Մասնակցել աշակերտական խորհրդի նիստերին, կատարել

առաջարկություններ

- Աջակցել աշակերտական խորհրդին իր նախաձեռնություններում

Բավարար է եղել դպրոցի կապը և համագործակցությունը ծնողների և համայնքի հետ, չնայած համայնքի աջակցությունը դպրոցին կարող է ավելի շոշափելի լինել: Այս ուղղությամբ սույն զարգացման ծրագրով նախատեսվող անելիքներ կան:

Դպրոցն ակտիվորեն համագործակցում է և կատարում է ԿԳՄՄՆ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության, ԿԶՆԱԿ, ԳԹԿ, Կրթության տեսչական մարմնի և կրթության կառավարման այլ մարմինների հանձնարարականները: Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի ,հասարակության և պետության ,ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը պայմաններ ստեղծելով ինքնակրթության և լրացուցիչ կրթական կարիքների բավարարման համար: Այս ամենի հիմքում միանշանակ ընկած է ժողովրդավարությունը, մարդասիրությունը, հանրամատչելիությունը, անձի ազատ զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների գուգորդումը: Դպրոցն պատասխանատու է պետական չափորոշիչների, հանրակրթական պետական ծրագրերին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության համար:

